Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

Ավարտական հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԱԾԱԿԱՆԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԵՎ ԳԵՐԱԴՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Ուսուցիչ՝ Լյուդմիլա Ուզունյան

Դպրոց՝ Երևանի թիվ 160 հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 3

Գլուխ 1

1.1 Ածական անուն. տեսակները---------- 5

1.2 Ածականների բնութագրական հատկանիշների տարբերությունը հայերենում և անգլերենում ---------- 8

Գլուխ 2

2.1 Ածականի համեմատական և գերադրական աստիճանի ուսուցումը ըստ տարիքային առանձնահատկությունների ---------- 12

Եզրակացություն ---------- 16

Օգտագործված գրականության ցանկ ---------- 17

Հավելված ---------- 18

Ներածություն

Մայրենի լեզուն լիարժեք տիրապետելուն զուգահեռ օտար լեզուների իմացությունը ընդլայնում է սովորողի աշխարհայացքը, նպաստում է հաղորդակցական կարողությունների ձևավորմանը, աջակցում սովորողի ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը: Այս հարափոփոխ դարաշրջանում օտար լեզվի իմացությունը ցանկացած միջավայրում դարձել է պարտադիր պահանջ՝ անկախ աշխատանքի բնույթից, նաև յուրատեսակ կրթական մակարդակի սանդղակ է:

Ածականի համեմատական և գերադրական աստիճանի ուսուցումն ու յուրացումը հանրակրթական դպրոցում ենթադրում է համակարգված մեթոդական մոտեցում:

Մեր թեմայի **ուսուցման կարևորությունն** արդի պայմաններում կայանում է նրանում, որ գտնենք ճիշտ եղանակներ և մեթոդներ նյութի մատուցումն առավել խոր, բազմակողմանի և դյուրին դարձնելու համար:

Մեր նպատակն է ընտրված թեմայի մանրակրկիտ ուսումնասիրումը, նյութի տիրապետումը, ճշգրիտ ներկայացումը և նյութի մատուցման ձևերի զարգացումն ու կատարելագործումը:

Հետազոտության **մեթոդաբանական հիմք** է հանդիսացել լեզվական, մանկավարժական, հոգեբանական վերլուծահամադրական ուսումնասիրությունը:

Սույն հետազոտական աշխատանքը լիարժեք և բազկամողմանի ներկայացնելու համար օգտվել ենք մի շարք մասնագիտական, մանկավարժությանն ու հոգեբանությանը վերաբերող գրականությունից:

Ժամանակակից օտար լեզուների ուսուցման առանցքը սովորողների հաղորդակցական լեզվական կոմպետենցիայի ձևավորումն է, զարգացումը, ուստի ուսուցչի խնդիրն է ստեղծել անձնակենտրոն ինտերակտիվ լեզվահաղորդակցական միջավայր՝ խթանելու սովորողների լեզու սովորելու ներքին ցանկությունը, պատասխանատվությունը, ինքնավստահությունն ու համագործակվելու կարողությունները :[1]

[1] Սուսաննա Ասատրյան, Անգլերենը լեզվահաղորդակցական ուսուցման համատեքստում English in the communicative language teaching context, Երևան , 2019, p.177

Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից: Առաջին գլուխը բաղկացած է «Ածական անուն. տեսակները» և «Ածականների բնութագրական հատկանիշների տարբերությունը հայերենում և անգլերենում» բաժիններից, իսկ երկրորդ գլխում՝ «Ածականի համեմատական և գերադրական աստիճանի ուսուցումը դպրոցում ըստ տարիքային առանձնահատկությունների»:

Գլուխ 1

Ածական անուն. տեսակները

Ածականը ժամանակակից հայերենի խոսքի մասերից մեկն է և ներկայանում է անուն խոսքի մասերի մեջ: Ելնելով որոշակի ձևական հատկանիշներից՝ Հովի. Երզնկացին 15-րդ դարում անուն խոսքի մասերից առանձնացրեց «էական» և «պատահական» տերմինները:[2] Էականը նկատի ուներ գոյականը, պատահականը՝ ածականը: Հետագա շրջանում Կղեմես Գալանոսը առանձնացրեց ածական անունը 1645թ.: 20-րդ դարի սկզբին վերջնականապես հստակվեցին անուն խոսքի մասերը: Ածականը ցույց է տալիս որակային կայուն հատկանիշ, որը բնորոշ է նրան կամ որը սերում է, առաջանում է այլ առարկայի հետ ունեցած հարաբերություններից: Անգլերենում "Adjective" բառը ծագել է լատիներեն "Adject" բառից, որը նշանակում է *ավելացնել*: Հետաքրքիր է, որ անգլերենում մինչ օրս գործածվող ածականներից շատերը ստեղծել է Շեքսպիրը, ինչպես օրինակ՝ lackluster, cold-blooded, tranquil, premeditated, flawed, deafening, lonely, jaded, etc.[3] Դպրոցական քերականության մեջ ածականը բնութագրվում է որպես առարկայի հատկանիշ կամ վերաբերություն ցույց տվող բառ: Արդի հայերենում ածականը հոլովվում է միայն գոյականաբար գործածվելիս: Իմաստային առումով ածականը բաժանվում է երկու խմբի՝ որակական և հարաբերական: Ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում ածականները լինում են որակական (deep. clever, wise, good, big) և հարաբերական (wooden, woolen, monthly):

Որակական /qualitative/ ածականները արտահայտում են առարկաների, անձանց որակական հատկանիշներ անմիջականորեն, ուղղակի կերպով:

Հարաբերական /relative/ ածականները առարկաների հատկանիշներ արտահայտում են այլ առարկաների հետ հարաբերությամբ, միջնորդավորված:

Որակական ածականը առարկայի բնույթից, էությունից բխող, առարկային ներհատուկ հատկանիշ է, հարաբերականը՝ հատկանիշը ներկայացնում է

[2] http://ysu.am/files/17A_Erznkaci_Srapyan.pdf, էջ 138

[3] https://www.engvid.com/english-vocabulary-10-adjectives-invented-by-shakespeare/

հարաբերությամբ: Իմաստային առումով՝ որակական ածականները կարող են արտահայտել՝

- առարկաների արտաքին, ձևական հատկանիշներ
- առարկաների ներքին հատկանիշներ
- գունային
- մարդկանց մտավոր, բարոյական, խառնվածքին բնորոշ հատկանիշներ:

Հարաբերական ածականները իմաստային առումով նույնպես բազմազան են՝ արտահայտելով տարբեր հարաբերություններ՝

- հարաբերություն այն առարկայի նկատմամբ, որից ծագել է, պատրաստվել է տվյալ առարկան: Օրինակ փայտե, քարե, այսինքն՝ ցույց են տալիս նյութեղեն հիմք:
- հարաբերություն այն առարկայի նկատմամբ, որից առաջանում է բնորոշվող առարկան՝ մայրական, հայրական, տերյանական:
- հարաբերություն այն առարկայի նկատմամբ, որին ծառայում է բնորոշվող առարկան՝ պատանեկան, ուսանողական, նկարչական
- հարաբերություն այն առարկայի՝ տեղի իմաստով, որին հատուկ է բնորոշվող առարկան՝ ծովային, ցամաքային, երևանյան:
- հարաբերություն այն ժամանակի նկատմամբ, որի մեջ գոյություն ունի բնորոշվող առարկան՝ գարնանային, աշնանային, նախօրեին:
- հարաբերություն այն առարկայի նկատմամբ, որի ունենալ-չունենալով է բնորոշվում առարկան՝ պոչավոր, դիմակավոր:
- հարաբերություն այն առարկայի նկատմամբ, որի ձևով է բնութագրվում առարկան: Սովորաբար սրանք այն ածականներն են բաղադրյալ, որոնց վերջնաբաղադրիչները արտահայտում են ձևի իմաստ, կերպի, նմանության՝ մարդանման, քաղաքատիպ, շղթայաձև:

Ըստ էության, որակական և հարաբերական ածականների քերականական սահմանները շատ շարժուն են, դինամիկ: Երբեմն դժվար է առանձնացնել դրանք: Բայց պետք է նկատի ունենալ նաև որակական և հարաբերական ածականների

բառաիմաստային տարբերությունները ուղեկցվում են քերականական և բառակազմական մի շարք յուրահատկություններով: Այսպես,

1. Որակական ածականների զգալի մասը կազմում է համեմատության աստիճան, մինչդեռ հարաբերական ածականները զուրկ են այդ հատկանիշներից: Այս յուրահատկությունը այնքան զգալի է, որ առանձին լեզվաբաններ ածականները դասում են ըստ համեմատության աստիճան ունեցողների և չունեցողների (Ջահուկյան) :
2. Որակական ածականները տարբերվում են ըստ կազմության՝ պարզ կամ արմատական, հարաբերականները միշտ բաղադրյալ են : Ըստ Հր. Աճառյանի՝ արմատական բառարանների բուն ածականների թիվը հասնում է 410-ի:
3. Արմատական որակական ածականներից ածականներից հեշտությամբ կարելի է կազմել կրկնավորներ, մինչդեռ հարաբերականներից՝ ոչ:
4. Որակական ածականներն ունեն արմատական հականիշներ, մինչդեռ հարաբերականները չունեն նման ձևով գործածություն:

Ածականի համեմատության աստիճանը քերականական կարգ է, որն արտահայտում է առարկայի հատկանիշի աստիճանը, չափը այլ առարկայի հետ: Որպես համեմատության եզրեր պետք է վերցնել միատեսակ առարկաներ և նույն հատկանիշներ: Համեմատության աստիճանը քերականորեն կարող է արտահայտել տարբեր միջոցներով՝ մասնիկավորմամբ, օժանդակ բառերով, նկարագրական եղանակով: Օժանդակ բառերից են՝ պես, նման, ավել, պակաս, մի քիչ, ինչ-որ չափով, որոշ չափով, չափազանց, խիստ, վերին աստիճանի: Ժամանակակից հայերենում և օտար շատ լեզուներում ընդունված է որակական ածականի համեմատության երեք աստիճան՝ դրական, բաղդատական (համեմատական), գերադրական:

Ածականի **դրական /positive/** աստիճանը ցույց է տալիս առարկայի կամ անձի բացարձակ հատկանիշը առանց համեմատության: Փաստորեն, դրական աստիճանը որակական ածականի ուղիղ, բառարանային ձևն է:

Ածականի **համեմատական/comparative/** աստիճանը ցույց է տալիս տվյալ հատկանիշի տարբերությունը նման կամ այլ առարկայի նույն հատկանիշի

համեմատությամբ: Համեմատական աստիճանը իր հերթին բաժանվում է երեք ենթաաստիճանների, քանի որ տրամաբանորեն հատկանիշը կարող է լինել ավելին, հավասար, պակաս: Այստեղից էլ համեմատությունը կարող է լինել առավելական, որը կազմվում է ավելի, առավել, շատ, բավական բառերով, հավասարական, որը կազմվում է պես, նման, չափ և այլ բառերով, նվազական, որը կազմվում է պակաս, քիչ, սակավ բառերով:

Գերադրական /superlative/ աստիճանի առավել տարածված կազմության միջոցը, որը կարելի է համարել համակարգային, *ամենա-* նախածանցն է, քանի որ համեմատության աստիճան ունեցող բոլոր ածականները անխտիր կարող են գերադրական կազմել ամենա – յի միջոցով կամ նրա համարժեք կազմող *ամենից* բառով: Գերադրականի կազմության մյուս ձևը - *գույն* ածանցական կազմությունն է, սակայն պետք է նշել, որ վերջինիս գործածության սահմանները խիստ սահմանափակ են (60-70 ածական): Գրաբարում գերադրականը կազմվում էր հույժ, կարի, սաստիկ բառերով:

Անգլերենում ածականների բաղդատական և գերադրական աստիճանները կազմվում են երկու ձևով՝

1.Միավանկ/one-syllable/ ածականների և -y, -ow, -er, -le վերջածանց ունեցող երկվանկ /two-syllable/ ածականների բաղդատական աստիճանը կազմվում է բառի հիմքին -er, իսկ գերադրական աստիճանը –est վերջավորություն ավելացնելով[4]:

Long-longer-longest

deep-deeper-deepest

clever-cleverer-cleverest

tall-taller-tallest

Եթե ածականը վերջանում է y տառով, որին նախորդում է բաղաձայն, y տառը փոխարինվում է i-ով՝ նախքան համեմատության վերջավորությունն ավելացնելը:

[4] Ye. Mkhitaryan, N. Hambartsoumyan, A.Markaryan, N.Avakyan, A practical English grammar, «Zangak-97», Yerevan, 2009, p. 33

Happy-happier-happiest

easy-easier-easiest

lovely – lovelier- loveliest

Եթե y տառին նախորդում է ձայնավոր, y –ը մնում է անփոփոխ:

Gay-gayer-gayest

Բառավերջի e-ն սղվում է -er, –est վերջավորություններից առաջ՝

Brave-braver-bravest

wise-wiser-wisest

large-larger-largest

Մեկ բաղաձայնով վերջացող միավանկ ածականների դեպքում, եթե բառավերջի բաղաձայնին նախորդում է կարճ ձայնավոր, վերջին բաղաձայնը կրկնապատկվում է -er, –est վերջավորություններից առաջ՝ փակ վանկը պահպանելու համար.

big-bigger-biggest

hot-hotter- hottest

thin-thinner-thinnest

Այս փոփոխությունը տեղի չի ունենում, երբ միավանկ ածականը վերջանում է տառակապակցությամբ.

thick-thicker-thickest

fresh-fresher-freshest

2. Բազմավանկ ածականների և երկվանկ ածականների մեծ մասի բաղդատական և գերադրական աստիճանները կազմվում են more (ավելի) և most (ամենա-) բառերի օգնությամբ.[5]

Interesting – more interesting- most interesting

beautiful- more beautiful – most beautiful

careful- more careful – most careful

romantic – more romantic – most romantic

3. Որոշ ածականներ ունեն համեմատության անկանոն ձևեր.[6]

[5] Հ.Ա. Թոքմաջյան , Ժամանակակից անգլերենի քերականություն, Երևան «Փյունիկ», 1995, p. 33

good-better-best

bad-worse-worst

little-less-least

far - farther – farthest (տարածության իմաստով)

further - furthest (ժամանակի և տարածության իմաստներով)

old – older – oldest (ավելի մեծ տարիքով, ամենամեծ)

elder – eldest (ավագ, ամենաավագ)

near – nearer - nearest (տարածության վերաբերյալ)

next (հաջորդականություն)

late – later – latest (ժամանակի վերաբերյալ)

latter – last (հաջորդականություն)

Գերադրական աստիճանով դրված ածականը սովորաբար գործածվում է որոշիչ հոդով.

Subject + verb + **the** *+* **superlative adjective** *+ object.*

This is the largest room of our flat.

She bought the cheapest dress.[7]

1. Which is the largest ocean?

a)the Atlantic b)the Pacific c) the Indian

The largest ocean is … .

2. Which is the longest river?

a)the Nile b)the Amazon c) the Mississipi

Համեմատական աստիճանի դեպքում գործածվում է than (քան) շաղկապը.

Subject + verb + ***comparative adjective + than*** + object.

Ann is more beautiful than her sister.

She is stronger than me.

He is heavier than she.

---

[6] Yelena Mkhitaryan, Basic English, Zangak, Yerevan. 2016, p. 225

[7] Գ.Գասպարյան, Ն.Հովհաննիսյան, Հ.Քաջբերունի, Անգլերեն 7, Երևան, Մանմար, 2019 , էջ 20

Tom is bigger than me.

History is more interesting than Maths.

The weather today is colder than yesterday.

Միանման հատկանիշներ համեմատելիս գործածվում է as…as (այնքան…որքան) շաղկապը.

He is as clever as his sister.

Ժխտական նախադասությունում շաղկապին նախորդում է not (so/ as) մասնիկը.

She is not so / as clever as her sister.

Գլուխ 2

Ածականի համեմատական և գերադրական աստիճանի ուսուցումը ըստ տարիքային առանձնահատկությունների

Տարրական դասարաններում ածականի՝ որպես առարկայի հատկանիշի ուսուցումն սկսվում է գունանուններից, որոնց ճանաչումով ուսուցման հենց առաջին աստիճանում

հանձնարարվում է ներկել համապատասխան նկարները, այսպես՝ «Բժիշկը հագել է կապույտ խալաթ»: «Զինվորականի համազգեստը կանաչ գույնի է»: «Ձմեռ պապի խալաթը կարմիր գույնի է»: «Կարմիր գույնի է նաև բժշկի գլխարկի խաչը»: «Պարուհու զգեստը սև գույնի է»: Այնուհետև համապատասխան գույներով են բնորոշվում ադամաթուզ, խաղող, խնձոր, ելակ, տանձ մրգանունները: Պարզ գունանուններին փոխարինելու են գալիս կազմությամբ բարդ գունանունները, և մոխրագույն, շագանակագույն, նարնջագույն և այլ բառերով բնութագրվում են անտառի կենդանիները՝ փիղը, գետաձին, գայլը, աղվեսը, մուկն ու կատուն: Այստեղ գունանուններին զուգահեռ ներկայացվում են ընտանի և վայրի կենդանիների հատկանիշները, որոնցով բնութագրվում են գոյականները: [8] Հետո սկսում ենք օրինակներով բացատրել երկու առարկաների նմանատիպ հատկանիշների համեմատությունը, կամ տարբերի առարկաների միևնույն հատկանիշի գերազանցությունը մյուսի նկատմամբ: Նկար-բառ-հատկանիշ դիդակտիկ ուսուցման եղանակով առաջին հերթին աշակերտները առնչվում են գոյականների՝ առարկա ցույց տվող բառերին, երկրորդաբար՝ հատկանիշ ցույց տվող բառերին (նկար 1, 2, 3) :

Հարաբերական ածականները բացատրելիս նշում ենք, որ հարաբերական ածականները կազմվում են գոյականներից ածականակերտ ածանցներ ավելացնելով: Հարաբերական ածականները չունեն համեմատության աստիճան:

Գծապատկերով հստակ ցույց ենք տալիս.

Գոյական	**Ածական**
մազ-hair	մազոտ - hairy
փայտ-wood	փայտե - wooden
քար -stone	քարոտ - stony

Ուսուցիչը լեզվական գիտելիքները փոխանցող չէ միայն, այլ նրա գործառույթներն են՝

[8] http://publications.ysu.am/wp-content/uploads/2021/12/Khachatryan_Narine.pdf, էջ 2

- ✓ Խթանող, խրախուսող
- ✓ ուսուցանող
- ✓ վերահսկող
- ✓ ծրագրող, նոր նյութեր ապահովող
- ✓ համագործակցող
- ✓ հետազոտող
- ✓ գնահատող
- ✓ խորհրդատու:[9]



Խճանկար (Jigsaw): Դասարանը բաժանվում է փոքր խմբերի՝ չորսական աշակերտ յուրաքանչյուր խմբում: Խմբի յուրաքանչյուր աշակերտ ստանում է փոքրիկ վահանակ և թիմակիցներից գաղտնի պահում վրան գրված տեղեկատվությունը:[10] Աշակերտները պետք է միասին ճիշտ հերթականությամբ դասավորեն վահանակները՝ նշելով հատկանիշի ավելի կամ պակաս լինելը:

«Մտքերի տարափ կամ մտագրոհ» (Brain storming) խմբային աշխատանքի պարզագույն, բայց շատ արդյունավետ մեթոդ է: Այս մեթոդի էությունը և առավելությունը կայանում է նրանում, որ աշակերտների առաջ կոնկրետ խնդիր է դրվում. նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետներն առանց

[9] Սուսաննա Ասատրյան, Անգլերենը լեզվահաղորդակցական ուսուցման համատեքստում English in the communicative language teaching context, Երևան , 2019, p.209
[10] Սուսաննա Ասատրյան, Անգլերենը լեզվահաղորդակցական ուսուցման համատեքստում English in the communicative language teaching context, Երևան , 2019, p.173

որևէ մեկնաբանության: Այստեղ բացակայում է քննադատությունը, խրախուսվում են արտահայտվող մտքերի քանակը, յուրաքանչյուր աշակերտի արտահայտած միտքը արժանանում է ուշադրության: Օրինակ, ինչ են հասկանում աշակերտները «Ածական» (Adjective) ասելով: Նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է իր տեսակետը, հետո նոր միայն ուսուցիչն է բացատրում, մեկնաբանում հասկացությունը՝ համապատասխան նյութերով: Նկարում պատկերված են տղա և աղջիկ: Աշակերտների մի խումբը պետք է բնութագրի աղջկան՝ *ինչպիսի* հարցադրումով /beautiful, clever, musical, nice, talented…/, մյուս խումբն էլ՝ տղային: Սա խթանում է ստեղծագործական մտածողությունը, ներշնչում է համարձակություն և ինքնավստահություն: Կշռադատման փուլում արդեն ուսուցիչն է ճշգրտում, ուղղում, լրացնում, ամբողջականացնում նախնական մտքերն ու գաղափարները: Միայն այս դեպքում է նյութը դառնում գիտելիք (նկար 4):

Ըստ Հ. Վիդոուսոնի՝ լեզվի իմացությունը ոչ միայն քերականական կանոնների իմացությունն է, այլ նաև այն ունակությունների ձեռքբերումը, ինչը հնարավոր է դարձնում լեզուն գործածել հաղորդակցության մեջ: Ուսուցման գործընթացում կարևորվում են ճանաչողության հետևյալ մեթոդները՝ վերլուծում, մասնավորեցում, համադրում, վերացարկում, անդրադարձում, մակածում (Induction), արտածում (Deduction), ընդհանրացում, կանխատեսում:

Բազմակի ընտրություն (Multiple Choice) վարժությունը տարբեր նպատակներով հաճախ է կիրառվում օտար լեզուների ուսուցման գործընթացում: Այս թեստերը ցույց են տալիս, թե սովորողները որքանով են ըմբռնել նյութի բովանդակությունը:[11]

Օտար լեզուների չափորոշիչներում և ծրագրերում հստակ ընդգծված են օտար լեզուների ուսուցման նպատակները, խնդիրներն ու սկզբունքները, սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանն ուղղված քայլերն ու գործողությունները, որոնք անշուշտ կարելի է զարգացնել միջմշակութային հարաբերությունների, շփումների միջոցով:

[11] Սուսաննա Ասատրյան, Անգլերենը լեզվահաղորդակցական ուսուցման համատեքստում English in the communicative language teaching context, Երևան , 2019, p.29

Ածականը որպես խոսքի մաս, ածականի համեմատական և գերադրական աստիճանները հնարավորություն են տալիս՝

- Նկարագրել անձեր, իրեր, երևույթներ, իրադարձություններ:
- Նկարագրել պարզ թեմաներով նկարներ:
- Պատմել դեպքերի, իրադարձությունների, հույզերի կամ զգացմունքների մասին:
- Տեղեկացնել, նորություններ հաղորդել:
- Բնութագրել, դատողություններ անել, կարծիք հայտնել այս կամ այն երևույթի, հարցի, իրադարձության մասին, հիմնավորել իր կարծիքը և այլն:
- Ներկայացնել իր երկրի և ժողովրդի հանրամշակութային պատկերը:
- Արտահայտվել տրված որոշակի իրադրության մասին՝ օգտագործելով լեզվական տարբեր կաղապարներով կառուցված /5-7/ կապակցված նախադասություն՝ խոսքում ընդգրկելով նաև նկարագրական տարրեր :[12]

Տարբեր դասարանների համար առաջարկվող **լեզվական նյութը (քերականությունը)** համապատասխանում է նախարարության կողմից հաստատված հանրակրթական ծրագրի առաջարկած բովանդակությանը:[13]

Եզրակացություն

Այսպիսով, սույն հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացության՝

- Ածականի համեմատական և գերադրական աստիճանների ուսուցումը դպրոցում պահանջում է համակարգված մոտեցում, նյութի մատուցման մանկավարժական մեթոդների համալիր օգտագործում:

[12] file:///C:/Users/User/Downloads/3otarlezu_(1).pdf, էջ 7
[13] tatevaleksanyan. wordpress.com/984-2/, էջ 1

- Օտար լեզվով ածական թեմայի ուսուցումը իրականացնում ենք հայերեն լեզվի հետ զուգահեռաբար՝ խթանելով երեխայի գիտելիքների վերհիշմանը, նյութի վերարտադրմանը, նոր միայն օտար լեզվով նյութի մատուցմանը:
- Տարրական դասարաններում ածականի համեմատական և գերադրական աստիճանի ուսուցումը իրականացնում ենք զրույցի, քարտերի, աղյուսակների, խաղերի միջոցով (համադրման/Matching/, հակադրման/Constrasting/, համեմատության/Comparing/)
- Միջին դասարաններում նյութի մատուցումն իրականացնում ենք Խճանկարի /Jigsaw/, Մտագրոհի /Brain storming/, քարտերի, աղյուսակների միջոցով:
- Թեմայի ուսուցումն իրականացնում ենք մայրենի և օտար լեզուների փոխադարձ կապի մեջ:
- Մենք ասես քայլ առ քայլ՝ պարզից բարդ, կերպարից պատկեր, պատկերներից ձև, ձևից ծավալ, ծավալից մանրամաս, մանրամասից ամբողջություն անցումներով ձևավորում ենք աշակերտների մոտ թեմայի ընկալման բարդ հոգեբանական գործընթացը:

Գրականության ցանկ

1.Սուսաննա Ասատրյան, Անգլերենը լեզվահաղորդակցական ուսուցման համատեքստում English in the communicative language teaching context, Երևան , 2019

2.Հ.Ա. Թոքմաջյան , Ժամանակակից անգլերենի քերականություն, Երևան «Փյունիկ», 1995

3.Ye.Mkhitaryan, N. Hambartsoumyan, A.Markaryan, N.Avakyan, A practical English grammar, «Zangak-97», Yerevan, 2009

4.Սերգեյ Աբրահամյան, Հայոց լեզու, «Լույս» հրատարակչություն, 2004

5.Yelena Mkhitaryan, Basic English, Zangak, Yerevan.2016

6. Գ.Գասպարյան, Ն.Հովհաննիսյան, Հ.Քաջբերունի, Անգլերեն 7, Երևան, Մանմար, 2019

7. https://www.engvid.com/english-vocabulary-10-adjectives-invented-by-shakespeare/

8. https://www.google.com/search?q=adjectives+for+GIRL&tbm

9. https://www.google.com/search?q=adjectives+for+boy

10. http://ysu.am/files/17A_Erznkaci_Srapyan.pdf

11. http://publications.ysu.am/wp-content/uploads/2021/12/Khachatryan_Narine.pdf

12. https://busyteacher.org/7485-fruit-flashcards.html

13. https://www.google.com/search?q=more+large+or+larger&sxsrf

14. www.google.com/search?q=colour+animals

15. https://www.google.com/search?q=colour+vegetables

16. file:///C:/Users/User/Downloads/3otarlezu_(1).pdf

17. tatevaleksanyan.wordpress.com/984-2/

18. https://www.fluentu.com/blog/educator-english/how-to-teach-adjectives-esl/

Հավելված

BEAUTIFUL
YOUTHFUL
CLEVER
MAGNETIC
MUSICAL
TALENTED
NICE
CLEVER
HANDSOME
BRIGHT
POLITE
HEROIC
BRAVE

Նկար 1





Նկար 2


Language Fun
Comparatives and Superlatives
1. Click the picture and say.
This is large.
This is larger.
This is the largest.
big
bigger
The
biggest
small
smaller
The
smallest
LIVEWORKSHEETS

Նկար 3

Adjectives to Describe a Girl
luscious
feisty
doting
valued
genuine
playful
content
supple
clever
delightful
spontaneous
trustworthy
hot
musical
passionate
respectful
engaging
natural
captivating
smiling
dreaming
venerable
high-energy
frail
focused
enchanting
knowledgeable
willing
laid-back
wise
careful
social
giving
feminine
delicate
trusting
Alluring
innovative
perfect
brilliant
sharp
curious
tawny
enigmatic
philanthropic
rebellious
ambitious
inspiring
gorgeous
creative
talented
graceful
romantic
sassy
observant
fun
nice
brave
serious
organized
beautiful
selfless
fabulous
devoted
Adjectives Words to Describe a Man
Groomed
Polished
Graceful
Husky
Refined
Stately
Exquisite
Elegant
Aristocratic
Courtly
Splendid
Heroic
Classy
Noble
Gallant
Majestic
Charming
Handsome
Polite
Affable
Alluring
Captivating
Enticing
Amiable
Amusing
Bright
Diligent
Dynamic
Fantastic
Attractive

Նկար 4